ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԷՖԵՍ» ԱՓԲԸ խորհրդի կողմից
Արձանագրություն 01 առ 08/08/2023

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է
08.08.2023 թվականից

Կոդ՝ 04.08.01
Խմբագրություն՝ 1.0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ 3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 4
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ 4
5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ I – ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ 5
6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ II – ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ 5
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ III – ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 6
8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 7
9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 10
10. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ 10
11. ՎԱՐԿԱՌՈՒԻ ՀԵՏ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 11
12. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 11
13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) 13
14. ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ 14
15. ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ) 15
16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 16
17. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 16

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն՝ Հիփոթեքային Վարկի Կանխավճարի ապահովագրության կանոնները (այսուհետ՝ Կանոններ) սահմանում են հիփոթեքային վարկի կանխվճարի ապահովագրության պայմանագրի կնքման կարգը, պայմանները, գործողությունը և դադարեցումը: Սույն Կանոնները հանդիսանում են Կանոնների համաձայն կնքված Հիփոթեքային Վարկի Կանխավճարի ապահովագրության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի/Վկայագրի) անբաժանելի մասը:

1.2. Սույն Կանոնների համաձայն «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն իրականացնում է ապահովագրություն ոչ կյանքի ապահովագրության ֆինանսական վնասների ապահովագրություն դասով:

1.3. Սույն Կանոններին համապատասխան կնքված ապահովագրության պայմանագրերով Ապահովագրող է հանդիսանում «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն՝ գրանցված ՀՀ, ք. Երևան, Հր.Քոչար 35/1, ՀՀ ԿԲ գրանցման համար՝ 14, տրված 25.07.2023թ.:

1.4. Ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում/Վկայագրում սահմանված վճարի դիմաց Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դեպքի (այսուհետ՝ ապահովագրական պատահար) ի հայտ գալու պարագայում հատուցել Ապահովադրին կամ այն անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը/Վկայագիրը (այսուհետ՝ Շահառու), ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված ֆինանսական վնասը (ապահովագրական հատուցում) Պայմանագրում/Վկայագրում սահմանված ապահովագրական գումարի շրջանակներում:

1.5. Սույն Կանոնների համաձայն կնքված Վկայագրերը գործում են ՀՀ տարածքում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

1.6. Սույն Կանոններում ներկայացված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ հավելվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ կամ պայմանագրի գործողության ընթացքում պայմանով, որ այդպիսի փոփոխությունները չեն հակասում օրենսդրությանը:

1.7. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադրին տրվում է Կանոնների մեկ օրինակ, ինչի մասին հատուկ նշվում է Պայմանագրում/Վկայագրում, որի դրույթները դառնում են Պայմանագրի/Վկայագրի անբաժան մասը և պարտադիր են Ապահովադրի և Ապահովագրողի համար, որոնք այսուհետ անվանվում են Կողմեր:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

2.1. ՀՀ օրենսդրության համաձայն և սույն Կանոնների հիման վրա «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն գործունակ ֆիզիկական անձանց՝ ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ Վարկառու կամ Ապահովադիր) հետ կնքում է Պայմանագրեր/Վկայագրեր: Որոշ դեպքերում Վկայագիր կարող է կնքվել նաև վարկատու կազմակերպության հետ:

2.2. Կանոնների համաձայն՝ կնքված Պայմանագրով/Վկայագրով կարող է ապահովագրվել միայն Ապահովադրի ֆինանսական վնասը իր կամ Շահառուի օգտին:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից լիցենզավորված ֆինանսավարկային կազմակերպությունների (այսուհետ՝ Վարկատու) գույքային շահերը՝ կապված իրենց սեփական ռեսուրսներով կամ նպատակային ծրագրերով ֆինանսավորման կամ վերաֆինանսավորման ենթակա բնակելի նշանակության անշարժ գույք (այսուհետ՝ Անշարժ գույք) ձեռք բերելու նպատակով հիփոթեքային վարկավորման ընթացքում ապահովագրական պատահարի ի հայտ գալու հետևանքով առաջացած Վարկատուի կորուստների հավանականության հետ:

3.2. Ըստ վարկավորման տեսակի՝ սույն Կանոնների համաձայն ապահովագրությունը կարող է իրականացվել 2 (երկու) փաթեթներից որևիցե մեկով, ինչը նշվում է Պայմանագրում/Վկայագրում:

3.3. Կողմերի համաձայնությամբ կարող են կիրառվել նաև այլ ապահովագրության փաթեթներ:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

4.1. Սույն Կանոնների համաձայն՝ ապահովագրական պատահար է համարվում Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրված Վարկի գծով վերջինիս կողմից վարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Անշարժ գույքի իրացման դեպքում՝ Չվճարված կանխավճարի չափով ապահովագրված գումարի (այսուհետ՝ ՉԿԳ) ամբողջական կամ մասնակի կորուստը՝ չստացումը Վարկատուի կողմից, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Վարկատուին վճարել ապահովագրական հատուցում Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով:

4.2. Կանոնների 4.1 կետում նշված կորուստ համարվում է այն դեպքը, երբ Վարկառուի կողմից Վարկի մայր գումարի կամ տոկոսի ամբողջ և/կամ հերթական մասի վճարումը չկատարելու պատճառով Վարկատուի կողմից Անշարժ գույքն իրացվում է դրանով ապահովված պահանջի բավարարման նպատակով, և իրացումից ստացված գումարը բավարար չէ Վարկատուի հանդեպ տվյալ պահին առկա վարկի մայր գումարի մնացորդի վճարման և/կամ ՉԿԳ-ի մնացորդի վրա մինչև երկու տարվա համար հաշվարկված տոկոսների վճարման համար:

4.3. Ապահովագրողի՝ Վկայագրով ստանձնած ապահովագրական ռիսկը դադարում է այն պահից, երբ Վարկառուն մարում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարին համարժեք վարկի մայր գումարի այն մասը, որը Վարկառուի կողմից պետք է վճարված լիներ՝ որպես կանխավճար (ՉԿԳ):

4.4. Ապահովագրողի կողմից Վարկատուին հատուցման ենթակա են միայն ՉԿԳ-ի մնացորդային գումարը:

4.5. Եթե Անշարժ գույքի իրացումից ստացված միջոցները բավարար են Վարկի մայր գումարի մնացորդի (Փաթեթ 2-ի դեպքում նաև՝ ՉԿԳ-ի մնացորդի վրա հաշվարկված մինչև երկու տարվա տոկոսների) վճարման համար, ապա Ապահովագրողի ստանձնած ապահովագրական ռիսկը դադարում է:

4.6. Սույն Կանոններով Ապահովագրողը չի ստանձնում Վարկառուի կողմից վարկային պարտավորության չկատարման ռիսկը:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ I – ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ

5.1. Ապահովագրության առարկան և էական պայմանները

5.1.1. Ազգային Հիփոթեքային Ընկերության ծրագրով վերաֆինանսավորման ենթակա Անշարժ գույք ձեռք բերելու նպատակով հիփոթեքային վարկ (այսուհետ՝ Վարկ) ստանալու համար Վարկատուին դիմած Վարկառուն կանխավճարի տեսքով վճարման ենթակա գումարի մի մասին համարժեք ապահովագրական գումարով Վկայագիր է ներկայացնում Վարկատուին, իսկ Ապահովագրողը պարտավորվում է Չվճարված կանխավճարի չափով ապահովագրված գումարի (այսուհետ՝ ՉԿԳ) մասով ապահովագրել Վարկատուի գույքային շահերը՝ ֆինանսական վնասների ապահովագրության դասով:

5.1.2. Կանոնների 5.1.1 կետում նշված ՉԿԳ-ն առավելագույնը կարող է կազմել Անշարժ գույքի շուկայական գնով գնահատված և ձեռք բերման արժեքներից նվազագույն գնի 20%-ը, որի ներկայացման պարագայում Կանոնների 5.1.1 կետում նշված նպատակով Վարկատուի կողմից տրամադրվելիք հիփոթեքային վարկի չափը առավելագույնը կարող է կազմել Անշարժ գույքի գնահատված և ձեռք բերման արժեքներից նվազագույն գնի 92.5%-ը:

5.1.3. Կանոնների դրույթներին համապատասխան՝ Վարկառուի կողմից իր վարկային պարտավորությունների չկատարման հետևանքով ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է հատուցել ՉԿԳ-ի կորստի արդյունքում Վարկատուի կրած ֆինանսական վնասը՝ սույն Կանոններում և Վարկառուի հետ կնքված Վկայագրում նշված սահմանաչափով ու կարգով:

5.2. Ապահովագրական գումարներ և չհատուցվող գումարներ

5.2.1. Վարկառուի հետ կնքվող ապահովագրության Վկայագրով ապահովագրական գումարը սահմանվում է ՉԿԳ-ի (նվազման դեպքում՝ դրա մնացորդային գումարի) չափով:

5.2.2. Կախված տրամադրված վարկի ժամկետից ու Վարկառուի կողմից վարկի մայր գումարի պարբերական մարումների չափից՝ ապահովագրական գումարը և համապատասխան ապահովագրավճարը յուրաքանչյուր տարի Վարկառուի հետ կնքվող նոր վկայագրում նվազեցվում են՝ հիմք ընդունելով Վարկատուի կողմից տրամադրված վարկի մարման ժամանակացույցի և վարկի և դրա գծով հաշվեգրված փաստացի մնացորդների վերաբերյալ տեղեկանքը:

5.2.3. Չհատուցվող գումար չի կիրառվում:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ II – ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

6.1. Ապահովագրության առարկան և էական Կանոնները

6.1.1. «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության միջոցով «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրով ֆինանսավորման ենթակա Անշարժ գույք ձեռք բերելու նպատակով հիփոթեքային վարկ ստանալու համար Վարկատուին դիմած Վարկառուն կանխավճարի տեսքով վճարման ենթակա գումարի մի մասին համարժեք գումարով Վկայագիր է ներկայացնում Վարկատուին, իսկ Ապահովագրողը պարտավորվում է Չվճարված կանխավճարի չափով ապահովագրական գումարի (այսուհետ՝ ՉԿԳ) կորստի

մասով ապահովագրել Վարկատուի գույքային շահերը ֆինանսական վնասների ապահովագրության դասով:

6.1.2. Սույն Կանոնների 6.1.1 կետում նշված ՉԿԳ-ն առավելագույնը կարող է կազմել երկրորդային շուկայից (ոչ անմիջապես կառուցապատողից) ձեռք բերվող բնակարանի դեպքում՝ այդ բնակարանի արժեքի 30 տոկոսի և վարկառուի կողմից 10 կամ ավելի տոկոսի չափով կատարված կանխավճարի տարբերության չափով, իսկ առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) ձեռք բերվող բնակարանի դեպքում՝ այդ բնակարանի արժեքի 20 տոկոսի և վարկառուի կողմից 7,5 կամ ավելի տոկոսի չափով կատարված կանխավճարի տարբերության չափով: Ընդ որում՝ որպես անշարժ գույքի արժեք՝ հիմք է ընդունվում անշարժ գույքի՝ շուկայական գնով գնահատված և ձեռք բերման արժեքներից նվազագույնը:

6.1.3. Կանոնների դրույթներին համապատասխան՝ Վարկառուի կողմից իր վարկային պարտավորությունների չկատարման հետևանքով ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է հատուցել ՉԿԳ-ի կորստի արդյունքում Վարկատուի կրած ֆինանսական վնասը՝ սույն Կանոններով և Վարկառուի հետ կնքված Վկայագրում նշված սահմանաչափով ու կարգով:

6.2. Ապահովագրական գումար և չհատուցվող գումար

6.2.1. Վարկառուի հետ կնքվող ապահովագրության Վկայագրով ապահովագրական գումարը սահմանվում է ՉԿԳ-ի (նվազման դեպքում՝ դրա մնացորդային գումարի) չափով:

6.2.2. Կախված տրամադրված վարկի ժամկետից ու Վարկառուի կողմից վարկի մայր գումարի և տոկոսների պարբերական մարումների չափից՝ ապահովագրական գումարը և համապատասխան ապահովագրավճարը յուրաքանչյուր տարի Վարկառուի հետ կնքված նոր վկայագրում նվազեցվում են՝ հիմք ընդունելով Վարկատուի կողմից տրամադրված վարկի մարման ժամանակացույցի և վարկի փաստացի մնացորդի վերաբերյալ տեղեկանքը:

6.2.3. Եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ, չհատուցվող գումար չի կիրառվում:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ III – ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

7.1. Ապահովագրության առարկան և էական պայմանները.

7.1.1. Բանկի սեփական ֆինանսական միջոցների հաշվին (առանց որևէ վերաֆինանսավորման ծրագրի) Անշարժ գույք ձեռք բերելու նպատակով հիփոթեքային վարկ (այսուհետ՝ Վարկ) ստանալու համար Վարկատուին դիմած Վարկառուն կանխավճարի տեսքով վճարման ենթակա գումարի մի մասին համարժեք ապահովագրական գումարով Վկայագիր է ներկայացնում Վարկատուին, իսկ Ապահովագրողը պարտավորվում է Չվճարված կանխավճարի չափով ապահովագրված գումարի (այսուհետ՝ ՉԿԳ) մասով ապահովագրել Վարկատուի գույքային շահերը՝ ֆինանսական վնասների ապահովագրության դասով:

7.1.2. Սույն Կանոնների 7.1.1 կետում նշված ՉԿԳ-ն առավելագույնը կարող է կազմել Անշարժ գույքի շուկայական գնով գնահատված և ձեռք բերման արժեքներից նվազագույն գնի 20%-ը, որի ներկայացման պարագայում Հավելվածի 1.1. կետում նշված նպատակով Վարկատուի կողմից տրամադրվելիք հիփոթեքային վարկի չափը առավելագույնը կարող

է կազմել Անշարժ գույքի գնահատված և ձեռք բերման արժեքներից նվազագույն գնի 90%-ը:

7.1.3. Կանոնների դրույթներին համապատասխան՝ Վարկառուի կողմից իր վարկային պարտավորությունների չկատարման հետևանքով ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է հատուցել ՉԿԳ-ի կորստի արդյունքում Վարկատուի կրած ֆինանսական վնասը՝ սույն Կանոններում և Վարկառուի հետ կնքված Վկայագրում նշված սահմանաչափով ու կարգով:

7.2. Ապահովագրական գումարներ և չհատուցվող գումարներ.

7.2.1. Վարկառուի հետ կնքվող ապահովագրության Վկայագրով ապահովագրական գումարը սահմանվում է ՉԿԳ-ի (նվազման դեպքում՝ դրա մնացորդային գումարի) չափով:

7.2.2. Կախված տրամադրված վարկի ժամկետից ու Վարկառուի կողմից վարկի մայր գումարի պարբերական մարումների չափից՝ ապահովագրական գումարը և համապատասխան ապահովագրավճարը յուրաքանչյուր տարի Վարկառուի հետ կնքվող նոր վկայագրում նվազեցվում են՝ հիմք ընդունելով Վարկատուի կողմից տրամադրված վարկի մարման ժամանակացույցի և վարկի և դրա գծով հաշվեգրված փաստացի մնացորդների վերաբերյալ տեղեկանքը:

7.2.3. Չհատուցվող գումար չի կիրառվում:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն կանոնների 4.1 կետում նշված ապահովագրական պատահարի տարրեր պարունակող իրադարձություն է համարվում վարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում պարտավորության կատարման ուղղությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան գործողությունների իրականացումը, որի արդյունքում գրավադրված Անշարժ գույքը կարող է իրացվել և Ապահովագրողի մոտ կարող է ծագել ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն: Սույն կետի իմաստով ապահովագրական պատահարի տարրեր պարունակող իրադարձությունները դրսևորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված գործողությունների արդյունքում համապատասխան որոշումների կայացմամբ, մասնավորապես, Վարկատուի կողմից Անշարժ գույքի բռնագանձման (իրացման) վերաբերյալ որոշման կայացումը՝ ի սեփականություն վերցնելու վերաբերյալ կամ հարկադիր կատարման ծառայության կողմից Անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու, ուղղակի վաճառքի վերաբերյալ որոշման կայացումը կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավասու մարմինների կողմից Անշարժ գույքի բռնագանձման (իրացման, վաճառքի) վերաբերյալ համապատասխան որոշման կայացումը: Անշարժ գույքի բռնագանձման (իրացման) մասին համապատասխան որոշումը կայացվելուց հետո Վարկատուն պարտավոր է այդ հանգամանքների մասին Պայմանագրում/Վկայագրում նշված էլ. փոստի միջոցով կամ Պայմանագրում/Վկայագրում նշված հեռախոսահամարներով 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել Ապահովագրողին, իսկ եթե Անշարժ գույքի իրացումն իրականացվում է դատական կարգով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավասու մարմինների կողմից Անշարժ գույքի բռնագանձման (իրացման, վաճառքի) վերաբերյալ համապատասխան որոշման հիման վրա, ապա նշված որոշումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վարկատուն պարտավոր է ստացման օրվանից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին տրամադրել բռնագանձման (իրացման) գործընթաց սկսելու մասին

Վարկատուի կամ հարկադիր կատարման ծառայության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավասու մարմինների կողմից Անշարժ գույքի բռնագանձման (իրացման, վաճառքի) վերաբերյալ համապատասխան որոշումը: Նշված ժամկետները խախտելու դեպքում Վարկատուն պարտավոր է բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար ներկայացնել հիմնավոր և օբյեկտիվ պատճառներ (ապացույցներ), իսկ այդպիսիք չներկայացնելու դեպքում ապահովագրական հատուցումը ենթակա է մերժման:

8.2. Անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում Վարկատուն պարտավոր է, անկախ իրացման եղանակներից, 7.1 կետում նշված ժամկետներում ՝ տրամադրել Կանոնների 8.9 կետում նշված փաստաթղթերը::

8.3. Անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու (իրացնելու) գործընթացը Վարկատուի կողմից պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության, Կանոնների, Պայմանագրի/ Վկայագրի, Անշարժ գույքի գրավի և վարկային պայմանագրերի պահանջներին համապատասխան:

8.4. Եթե Անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու (իրացնելու) գործընթացն իրականացվել է ՀՀ օրենսդրության, Կանոնների, Վկայագրի/Պայմանագրի, Անշարժ գույքի գրավի և վարկային պայմանագրերի պահանջների խախտմամբ (այդ թվում՝ գործընթացին մասնակից Վարկատուից տարբերվող այլ իրավասու մարմինների կամ անձանց կողմից) (ինչը կարող է հաստատվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտով), որի արդյունքում Վարկատուի նկատմամբ Վարկառուի վարկային պարտավորությունները մնացել են չբավարարված կամ մասնակի բավարարված, ապա Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ եթե Ապահովագրողն արդեն իսկ վճարել է ապահովագրական հատուցումը, ապա Վարկատուն և Վարկառուն՝ որպես համապարտ պարտապաններ, պարտավոր են ամբողջությամբ վերադարձնել Ապահովագրողի կողմից հատուցված ապահովագրական գումարը:

8.5. Ապահովագրական հատուցում վճարելու համար վնասի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևերով՝

Ապահովագրական փաթեթ I և Ապահովագրական փաթեթ II

Եթե $I \geq Sm$, ապա $C=0$, հակառակ դեպքում $C=S$, որտեղ՝

(Sm)՝ Վարկի մայր գումարի մնացորդային արժեքն է,

(S)՝ ապահովագրական իրադարձությունը տեղի ունենալու օրվա դրությամբ ՉԿԳ-ի գծով վարկի մայր գումարի փաստացի մնացորդն է,

(I)՝ գույքի իրացումից ստացված հասույթն է՝ առանց իրացման ծախսերի նվազեցման,

(C)՝ ապահովագրական հատուցման գումարն է:

8.6. Անշարժ գույքի իրացման արդյունքում Կանոնների 4.1. կետում նշված Պատահարն առաջանալու դեպքում Վարկատուն պարտավոր է 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել հայցային դիմում և ապահովագրական հատուցման համար սույն Կանոնների 8.9 կետում նշված փաստաթղթերը, բացառությամբ, այն փաստաթղթերի, որոնք արդեն իսկ ներկայացվել են 7.1 կետով սահմանված կարգով: Նշված ժամկետի սկիզբը հաշվարկվում է Անշարժ գույքի իրացման ու իրացման արդյունքում գոյացած գումարը բաշխելու պահից: Ապահովագրական հատուցումը վճարվում է Վարկատուի կողմից նշված հաշվին՝ փոխանցումով:

8.7. Սույն Կանոններով նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողն ընդունում է որոշում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու կամ նվազեցնելու մասին: Համապատասխան որոշումը, այն կայացվելուց հետո հնգօրյա ժամկետում, Ապահովագրողը փոստային ծառայության միջոցով առաքում է Վարկառուին՝ նրա մշտական բնակության հասցեով, և Վարկատուին՝ նրա գործունեության հասցեով:

8.8. Ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը կայացնելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը Վարկատուին միանվագ վճարում է հատուցումը:

8.9. Կանոնների 7.1. և 8.6 կետերում նշված անհրաժեշտ փաստաթղթերին են վերաբերվում ապահովագրության վկայագիրը, գրավադրված Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, սեփականության վկայականը, աճուրդի արձանագրության պատճենը, Վարկատուի որոշումները՝ կապված գույքի իրացման հետ, չվճարված Կանխավճարի կամ դրա մասի չափի վերաբերյալ տեղեկանքը, ինչպես նաև Ապահովագրողի պահանջով գույքի իրացման հետ կապված և ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ Վարկատուին հասանելի ցանկացած այլ փաստաթուղթ:

8.10. Եթե Վարկառուն խախտում է իր ֆինանսական պարտավորությունները, և ի հայտ է եկել Կանոնների 7.1 կետում նշված ապահովագրական իրադարձությունը, հետևաբար առկա է ապահովագրական պատահարի նախադրյալներ ունեցող իրավիճակ, ապա Ապահովագրողը, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ վերաֆինանսավորման ներկայացվելիք կամ վերաֆինանսավորված վարկային փաթեթների դեպքում՝ անկախ կողմերի փոխադարձ համաձայնության, Վարկատուին տրամադրում է ապահովագրական հատուցման կանխավճար՝ C=S գումարի սահմաններում, որը սառեցվում է Վարկատուի կողմից մինչև ապահովագրական պատահարի ի հայտ գալու հանգամանքի հաստատումը: Հետագայում, ապահովագրական հատուցման գործընթացը կարգավորելիս կողմերը կատարում են վերջնահաշվարկ, հաշվի առնելով Վարկատուին տրված հատուցման կանխավճարը:

8.11. Եթե Վարկատուին տրված հատուցման կանխավճարի գումարը կազմում է ավելի մեծ գումար, քան հատուցման ենթակա վերջնական գումարը, ապա Վարկատուն պարտավորվում է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել Ապահովագրողին այդ գումարների տարբերությունը:

8.12. Եթե Վարկատուին տրված հատուցման կանխավճարի գումարը կազմում է ավելի փոքր գումար, քան հատուցման ենթակա վերջնական գումարը, ապա Վարկատուին հատուցման ենթակա կլինի այդ գումարների տարբերությունը:

8.13. Եթե վարկառուն վարկային պարտավորությունները կատարում է ապահովագրական իրադարձության և ապահովագրական պատահարի միջև ընկած ժամանակահատվածում, և Ապահովագրողը կանխավճարի ապահովագրական հատուցումն արդեն վճարել է Վարկատուին, ապա վերջնահաշվարկը կատարվում է Վարկատուի կողմից Անշարժ գույքի բռնագանձման (իրացման) վերաբերյալ որոշման վերացման օրվան հաջորդող 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

9.1. Պայմանագրի կնքման համար Ապահովագրողը սահմանում է ապահովագրավճար, որը ենթակա է վճարման Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի կողմից:

9.2. Ապահովագրական սակագինը սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափն է: Այն սահմանվում է՝ ելնելով ապահովագրության համաձայնեցված պայմանների գծով պարտականությունների ծավալից, ապահովագրության ժամկետից, ապահովագրավճարի վճարման կարգից, ապահովագրության օբյեկտի գտնվելու վայրից, տեսակից և այլ գործոններից, որոնք ազդում են ապահովագրական ռիսկի աստիճանի վրա, այդ թվում չհատուցվող գումարի առկայությունից և չափից:

9.3. Ապահովագրավճարի չափը սահմանվում է Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրողի կողմից՝ հիմք ընդունելով Ապահովագրական սակագինը:

9.4. Ապահովագրավճարի վճարման կարգը և պայմանները սահմանվում են Վկայագրով/Պայմանագրով:

10. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ

10.1. Հետևյալ դեպքերը և/կամ իրադարձությունները չեն համարվում ապահովագրական պատահար և ենթակա չեն հատուցման.

10.1.1. գրավադրված և կառուցման մեջ գտնվող անշարժ գույքի բացակայությունը շինարարությունը չավարտելու կամ կառուցապատողի սնանկացման պատճառով:

10.1.2. Վարկատուի կրած այլ ֆինանսական և/կամ Վարկի հետ կապված այլ վնասներ և/կամ կորուստներ, այդ թվում՝ հաշվարկված տոկոսագումարներ, վարկի չմարման կամ ոչ պատշաճ ձևով մարման հետևանքով առաջացած տույժեր, տուգանքներ, պարտադիր վճարներ, կոմիսիոն վճարներ կամ Վարկառուի կողմից այլ ֆինանսական պարտավորությունների կատարում կամ թերի կատարում,

10.1.3. Պետական մարմինների կարգադրությամբ Հիփոթեքի առարկայի առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի կամ այլ նմանատիպ գործողությունների,

10.1.4. Հիփոթեքի առարկայի նկատմամբ Վարկառուի սեփականության իրավունքի կորստի,

10.1.5. Ապահովադրի (Վարկառուի) և Շահառուի (նրա աշխատողների) միջև միտումնավոր ապօրինի համաձայնության:

10.2. Ապահովագրողի կողմից պահովագրական հատուցման մերժման հիմք է ապահովագրական հատուցում ստանալու համար Վարկատուի կողմից հայցային դիմումը և (կամ) ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կանոններով սահմանված ժամկետներում չներկայացնելը կամ իրականությանը չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացնելը:

10.3. Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական հատուցման վճարումը մերժել նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

11. ՎԱՐԿԱՌՈՒԻ ՀԵՏ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

11.1. Պոտենցիալ Վարկառուի ցանկության և Վարկատուի համաձայնության դեպքում Ապահովագրողի և Վարկառուի միջև կնքվում է Պայմանագիր/Վկայագիր՝ ֆինանսական վնասներից ապահովագրության դասով:

11.2. Պայմանագրով/Վկայագրով Շահառու հանդես է գալիս Վարկատուն:

11.3. Մինչև Պայմանագրի/Վկայագիր կնքելը Վարկատուն և/կամ Վարկառուն Ապահովագրողին է տրամադրում բոլոր պահանջվող տվյալները և փաստաթղթերը, որոնց հիման վրա Ապահովագրողը կազմում է Պայմանագիր/Վկայագիր: Ապահովագրողը պարտավոր է պահպանել Վարկառուի և/կամ Վարկատուի կողմից իրեն տրամադրված փաստաթղթերի գաղտնիությունը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

11.4. Վարկառուն վարկային պայմանագրի կնքման գործընթացում տալիս է իր գրավոր համաձայնությունն առ այն, որ Վարկատուն, Ապահովագրողի պահանջով, կարող է Ապահովագրողին տրամադրել բանկային գաղտնիք հանդիսացող Վարկառուի վարկի վերաբերյալ տեղեկատվություն:

11.5. Առաջին տարվա համար կնքվող Պայմանագիրն/Վկայագիրն ուժի մեջ է մտնում Վարկատուի և Վարկառուի հետ կնքվելիք վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը:

11.6. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից Կանոններով ստանձնած պարտավորությունը կատարելուց հետո հաջորդ տարվա համար Ապահովագրողի և Վարկառուի միջև նոր Պայմանագիր/Վկայագիր չի կնքվում:

11.7. Պայմանագրի/Վկայագրի թողարկումը կարող է իրականացվել ինչպես Ապահովագրողի, այնպես էլ Վարկատուի կողմից՝ Ապահովագրողի համապատասխան համակարգչային ծրագրի միջոցով:

11.8. Ապահովագրության պայմանագիր կարող է կնքվել նաև Ապահովագրողի և Վարկատուի միջև՝ համաձայն վերջիններիս միջև կնքված համագործակցության պայմանագրի և/կամ Պայմանագրի:

12. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. Վարկատուն իրավունք ունի.

12.1.1. Ապահովագրողի և Վարկառուի հետ փոխադարձ համաձայնությամբ պահանջել փոփոխել ապահովագրական ռիսկերի, ապահովագրական ծրագրերի, ապահովագրական գումարի չափը՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու և, անհրաժեշտության դեպքում, Վարկառուի կողմից լրացուցիչ ապահովագրավճարի վճարման պայմանով,

12.1.2. ստանալ Վարկառուի հետ կնքված ապահովագրության Վկայագրի օրինակը,

12.1.3. որպես շահառու՝ մասնակցել հատուցման հետ կապված բոլոր գործընթացներին և Կանոններով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում:

12.2. Վարկատուն պարտավոր է.

12.2.1. Ծանոթացնել բոլոր պոտենցիալ վարկառուներին սույն Կանոններով նախատեսված դրույթների և Կանոնների մասին,

12.2.2. Ապահովագրողին տրամադրել ամբողջական տեղեկատվություն ապահովագրական ռիսկի ընդունման, ինչպես նաև ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության, որը նկարագրված է կանոնների 7.1 կետում, և

նրա տեղի ունենալու դեպքում հնարավոր վնասի չափերի (ապահովագրական ռիսկի) հետ կապ ունեցող հանգամանքների մասին,

12.2.3. Վկայագրով սահմանված ծավալով և ժամկետներում Վարկառուի հաշվից Ապահովագրողին փոխանցել ապահովագրավճարը (հերթական ապահովագրավճարը), եթե այլ բան նախատեսված չէ վարկատուի հետ կնքված պայմանագրով,

12.2.4. Սահմանված ժամկետներում Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրական պատահարի մասին,

12.2.5. պահպանել ապահովագրության գաղտնիքը,

12.2.6. սեփական պատասխանատվության և իրավասության շրջանակներում կիրառել ապահովագրական ռիսկի մեծացմանը բերող հանգամանքները վերացնելուն ուղղված միջոցներ,

12.2.7. Ապահովագրողի գրավոր պահանջի դեպքում վերջինիս տրամադրել գրավադրված գույքի իրացման հետ առնչվող ցանկացած տեղեկատվություն,

12.2.8. Ապահովել Ապահովագրողի հետ հարաբերությունների շրջանակում ձեռք բերված տեղեկությունների գաղտնիությունը:

12.3. Ապահովագրողն իրավունք ունի.

12.3.1. ստուգել Վարկատուի և Վարկառուի կողմից հաղորդած տեղեկատվության արժանահատվությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անձամբ հետաքննել ապահովագրական պատահարի հանգամանքները՝ կատարելով անհրաժեշտ հարցումներ: Այս դեպքում Կանոններով սահմանված ժամկետը 30 օր ժամկետով կասեցվում է (բացառությամբ քրեական կամ վարչական վարույթի իրականացումից, որի դեպքում նշված ժամկետը երկարաձգվում է մինչև այդ վարույթի ավարտը) և վերսկսվում է կասեցման հիմքերը վերանայելու մասին իրեն հայտնի դառնալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

12.3.2. Վարկատուից պահանջել տեղեկատվություն վերջինիս և Վարկառուի կողմից սույն Կանոնների, ապահովագրության Վկայագրի/Պայմանագրի պահանջների և Կանոնների կատարման վերաբերյալ,

12.3.3. մերժել Վարկառուի/Ապահովադրի հետ ապահովագրության Վկայագրի կնքումը կամ միակողմանի լուծել Ապահովադրի հետ կնքված վկայագիրը, եթե Վարկատուն և/կամ Վարկառուն հաղորդել են իրականությանը չհամապատասխանող և/կամ սուտ և/կամ ոչ ճիշտ տեղեկություններ կամ սահմանված ժամկետներում չեն վճարել ապահովագրավճարը,

12.3.4. Տեղեկացված լինել գրավադրված Անշարժ գույքի իրացման հետ կապված բոլոր գործընթացների վերաբերյալ, Վարկատուից պահանջել գույքի իրացման հետ առնչվող ցանկացած տեղեկատվություն և վերջինիս հասանելի փաստաթուղթ: Ապահովադրի կողմից պատվիրված՝ Գնահատող կազմակերպության կողմից տրված Անշարժ գույքի արժեքի (շուկայական և լիկվիդացիոն) վերաբերյալ գնահատման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի իր միջոցների հաշվին պահանջել անշարժ գույքի գնահատման իրականացում այլ անկախ գնահատող կազմակերպության մոտ: Ստացված գնահատված արժեքների միջև Էական (միևնույն արժեքների միջև 20% և ավել տարբերության պարագայում՝ հաշվարկված առավելագույն արժեքից) տարբերությունների արձանագրման դեպքում, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, անշարժ գույքի գնահատման պատվիրակումը կարող է իրականացվել

երրորդ գնահատող կազմակերպության կողմից, կամ համաձայն ՀՀ օրենսդրության վիճարկվել դատական կարգով:

12.3.5. մերժել կամ նվազեցնել ապահովագրական հատուցման վճարումը՝ համաձայն սույն Կանոններով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերի:

12.4. Ապահովագրողը պարտավոր է.

12.4.1. ծանոթացնել Ապահովադրին ապահովագրության Կանոնների հետ և անհրաժեշտ Կանոնների առկայության դեպքում կնքել Ապահովագրության վկայագիր՝ տրամադրելով դրա մեկ օրինակը,

12.4.2. Վկայագրով և Կանոններով նախատեսված դեպքերում Վարկատուին՝ որպես շահառու, վճարել ապահովագրական հատուցում,

12.4.3. ապահովել Վարկատուի և Վարկառուի հետ հարաբերությունների շրջանակում ձեռք բերված տեղեկությունների գաղտնիությունը:

12.5. Ապահովադիրն իրավունք ունի.

12.5.1. ապահովագրական ռիսկի շարունակական նվազեցման դեպքում պահանջելու նվազեցնել ապահովագրավճարը,

12.5.2. դիմել Վկայագրի/Պայմանագրի Կանոնների փոփոխման և/կամ լրացման համար,

12.5.3. սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Վկայագիրը/Պայմանագիրը,

12.5.4. ստանալ Վկայագրի կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը՝ բնօրինակը կորցնելու կամ վնասվելու դեպքում:

12.6. Ապահովադիրը պարտավոր է.

12.6.1. Վկայագրում/Պայմանագրում սահմանված չափով, կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,

12.6.2. Վկայագիրը կնքել հօգուտ Բանկի,

12.6.3. Ապահովագրողին տրամադրել Անշարժ գույքի իրացման հետ կապված և հատուցման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները,

12.6.4. Կատարել սույն Կանոններով և Վկայագրով/Պայմանագրով սահմանված դրույթները,

12.6.5. Վկայագրում կամ Պայմանագրում նշված տվյալների փոփոխության դեպքում այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտնել Ապահովագրողին, իսկ չհայտնելու դեպքում կրել դրա բացասական հետևանքները:

12.6.6. Ապահովագրողը, Ապահովադիրը և Շահառուն կարող են ունենալ Կանոններով, Պայմանագրով և Վկայագրով նախատեսված, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ իրավունքներ և կրել ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ պարտականություններ:

13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

13.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Կանոններից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև այլ կառավարության կողմից սահմանված սահմանափակումների և արգելքների, որը ծագել է Վկայագիրը կնքելուց հետո,

և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել, այդ թվում՝ գրավադրված Անշարժ գույքի բռնագրավման, ազգայնացման, քանդման կամ ռեկվիզիցիայի հետ:

13.2. Այն դեպքում, երբ Կանոնների 13.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է Կողմերից որևէ մեկի կողմից իր պարտականությունները Կանոններով և կամ Վկայագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Վկայագիրը՝ այդ մասին 5 օր առաջ նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

13.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Կանոններից/Վկայագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

14. ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

14.1. Ապահովագրության գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրով/Վկայագրով:

14.2. Պայմանագիրը/Վկայագիրը վաղաժամկետ դադարում է՝

ա) Ապահովադրի, եթե ֆիզիկական անձ է՝ մահվան դեպքում,

բ) Ապահովադրի՝ Պայմանագրից/ Վկայագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում, սակայն միայն Վարկատուի գրավոր համաձայնությամբ,

գ) Պայամանագրով/Վկայագրով նախատեսված բոլոր պարտավորություններն Ապահովագրողի կողմից կատարվելու, այդ թվում՝ ապահովագրական գումարը սպառվելու դեպքում,

դ) եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահարի վրա հասնելու հավանականությունը վերացել է, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից զատ այլ հանգամանքների բերումով: Այս դեպքում Ապահովագրողը Ապահովադրին հետ է վերադարձնում ապահովագրավճարի մի մասը՝ հաշվարկված համամասնորեն ապահովագրության գործած ժամանակահատվածի համար,

ե) Ապահովադրի գրավոր դիմումի և Վարկատուի գրավոր համաձայնությամբ, եթե Վարկատուի և Վարկառուի միջև կնքված Վարկային պայմանագրի համաձայն կատարված վարկի գծով մարումների արդյունքում Վարկ/Գրավ հարաբերակցությունը հասել է Վարկատուի կողմից սահմանված հարաբերակցությանը: Այս դեպքում Ապահովադրին վերադարձման ենթակա է վճարված ապահովագրավճարը՝ Վկայագրի չլրացած ժամկետին համամասնորեն՝ նվազեցնելով Վկայագրով նախատեսված ընդհանուր ապահովագրական վճարի 10%-ի չափով՝ որպես գործառնական ծախսեր:

զ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով, Վկայագրով /Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

14.3. Պայմանագիրը/Վկայագիրը կարող է Ապահովագրողի պահանջով միակողմանիորեն վաղաժամկետ լուծվել՝ Ապահովադրի կողմից օրենքով, այլ իրավական ակտերով,

Կանոններով կամ Վկայագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում, որի ժամանակ Ապահովադրին է վերադարձվում ապահովագրավճարը՝ Պայմանագրի/Վկայագրի չլրացած ժամկետին համամասնորեն, որը հաշվարկվում է Պայմանագրի/Վկայագրի գործողությունը դադարեցնելու օրվանից:

14.4. Ապահովադիրն իրավունք ունի, Վարկատուի գրավոր համաձայնության առկայության դեպքում, միակողմանիորեն վաղաժամկետ լուծելու Վկայագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան 5 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին, եթե այլ ժամկետ նախատեսված չէ Վկայագրով:

14.5. Ապահովադրի կողմից Վկայագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում՝ վերջինիս վերադարձվում է վճարված ապահովագրավճարը՝ Վկայագրի չլրացած ժամկետին համամասնորեն՝ նվազեցնելով Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ընդհանուր ապահովագրական վճարի 10%-ի չափով՝ որպես գործառնական ծախսեր:

14.6. Այն դեպքում, երբ Ապահովադրի կողմից Վկայագրի վաղաժամկետ լուծման պահանջը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարը՝ Պայմանագրի/Վկայագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

14.7. Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայամանագրի/Վկայագրի գծով, անկախ հատուցման գումարի չափից, դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար կամ ստացել է այն, բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է, և Ապահովադիրը (Շահառուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ:

14.8. Ապահովագրողի լուծարման դեպքում վերջինս պարտավոր է Ապահովադրին վերադարձնել Պայմանագրի չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը:

14.9. Վկայագրի գործողության դադարումը Կողմերին չի ազատում Վկայագրի գործողության ընթացքում առաջացած ապահովագրական պատահարների և ապահովագրական հատուցումների հետ կապված միմյանց հանդեպ ստանձնած պայմանագրային պարտավորություններից:

15. ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

15.1. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, Ապահովագրողին ապահովագրական հատուցում վճարած, հատուցված գումարի սահմաններում, անցնում է պահանջի իրավունքը, որն ունի Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրության արդյուքում հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ:

15.2. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր ապացույցները և փաստաթղթերը, գրավոր հայտնել իրեն հայտնի ամբողջ տեղեկատվությունը և իրականացնել Ապահովագրողին անհրաժեշտ բոլոր գործողությունները իրեն փոխանցված իրավունքների իրացման համար, որն ունի Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրության արդյունքում հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ:

15.3. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր ապացույցները և փաստաթղթերը, գրավոր հայտնել իրեն հայտնի ամբողջ

տեղեկատվությունը և իրականացնել Ապահովագրողին անհրաժեշտ բոլոր գործողությունները իրեն փոխանցված իրավունքների իրացման համար, որն ունի Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրության արդյունքում հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ:

15.4. Եթե Ապահովադիրը երրորդ անձանցից հատուցում է ստացել, Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմաններով վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի տարբերությունը: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին անմիջապես տեղեկացնել այդպիսի գումարների ստացման մասին:

15.5. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը (կամ դրան համապատասխան մասը), եթե պարզվի հանգամանք, որը օրենքով կամ սույն կանոններով ամբողջությամբ կամ մասնակի զրկում է Ապահովադրին ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:

16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16.1. Ապահովագրողը իրավունք ունի պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու սույն Կանոններով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

16.2. Սույն Կանոնների համաձայն կնքված Պայմանագրերի գործողության ընթացքում կամ հետո Կողմերի միջև ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության (համաձայնության չգալու) դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

17. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17.1. Սույն Կանոնների համաձայն Ապահովագրողի կողմից Ապահովադրի (Շահառուի) հասցեին ուղարկված բոլոր ծանուցումները և գրությունները համարվում են պատշաճ ծանուցված, եթե պահպանվել են հետևյալ պայմաններից որևէ մեկը.

17.1.1. Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված հասցեով,

17.1.2. Ծանուցումը ուղարկվել է SMS հաղորդագրությամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ Ապահովադրի (Շահառուի) և/կամ նրա լիազոր անձի կողմից տրամադրած այլ փաստաթղթի մեջ (հայտային դիմում, հայտարարություն, և այլն) նշված հեռախոսահամարով,

17.1.3. Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված էլեկտրոնային հասցեով,

17.2. Հասցեների և/կամ վերոնշյալ ռեկվիզիտների փոփոխության դեպքում ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է այդ մասին ողջամիտ ժամկետում տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողին ողջամիտ ժամկետում չեն տեղեկացրել հասցեների և/կամ այլ ռեկվիզիտների փոփոխության մասին, ապա Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները/գրությունները հին հասցեներով/ռեկվիզիտներով համարվում են պատշաճ ծանուցված այն ամսաթվից, երբ այդ ծանուցումները ստացվել են այդ հասցեներում:

17.3. Ապահովագրողն իրավունք ունի միակողմ՝ առանց Ապահովադրի համաձայնության փոփոխություն և/կամ լրացում կատարելու սույն Կանոններում:

17.4. Կանոններում փոփոխություն և/կամ լրացում կատարելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է ոչ ուշ քան մեկ ամիս առաջ գրավոր ծանուցել Ապահովադրին:

17.5. Կատարված փոփոխությունների և/կամ լրացումների հետ համաձայն չլինելու դեպքում Ապահովադիրն իրավունք ունի անմիջապես լուծելու ապահովագրության Պայմանագիրը: